ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» -------- 2022 թվական N --- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրաբերություն ընդունել Դավիթ Ճգնավորյանի սեփականությունը հանդիսացող ընդհանուր 5671860 ՀՀ դրամ արժեքով գույքը՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման կատարումն ապահովելու համար կնքել համապատասխան պայմանագիր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՀՐ. ՄԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Երեւան քաղաքի ավագանու
2022թ. _____-ի
N _____-Ա որոշման

ՑԱՆԿ
Երևան համայնքին նվիրաբերվող գույքի

Հ/Հ	Գույքի անվանումը	Չափման միավորը և քանակը	Միավորի արժեքը, ՀՀ դրամ	Ընդամենը
1.	Մոնիտոր ինտերակտիվ սենսորային 86 դյույմ Dell 86 SmartBoard 4K - (85.6") Black	1 հատ	3593860	3593860
2.	Մոնիտոր սենսորային 24 դյույմ Dell 24" P2418HT 1920x1080 IPS WLED	10 հատ	207800	2078000
	Ընդհանուր արժեքը		5671860 ՀՀ դրամ	

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Դավիթ Ճգնավորյանը ցանկություն է հայտնել Երևան համայնքին նվիրաբերել ժամանակակից համակարգչային տեխնիկա՝ որը հնարավորություն կտա Երևան քաղաքապետարանի աշխատակազմի կողմից Երևանի տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված որոշակի գործառույթներն իրականացնել առավել արագ և որակով:

Քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության (նվիրաբերության) պայմանագիրը համարվում է լուծված: Հետևաբար անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի ավագանու որոշմամբ ընդունել Դավիթ Ճգնավորյանի կողմից Երևան համայնքին նվիրաբերվող գույքը, որից ելնելով Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Գույքը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույքը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույքը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում կամուտներում ծախսերի էական փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ